



Անվտանգության ցանց բիզնեսի սեփականատերերի կամ
ինքնագրադված և անկախ կապալառուների համար

Հաշմանդամության ապահովագրությունն Ընտրովի ապահովագրում





Ֆինանսական անվտանգության ցանց

Մենք առաջարկում ենք [Disability Insurance Elective Coverage \(DIEC\)](https://edd.ca.gov/Payroll_Taxes/Disability_Insurance_Elective_Coverage.htm) (edd.ca.gov/Payroll_Taxes/Disability_Insurance_Elective_Coverage.htm) ծրագիր այն մարդկանց համար, որոնք չեն վճարում Նահանգային հաշմանդամության Ապահովագրություն (SDI), բայց ցանկանում են ապահովագրվել հաշմանդամության ապահովագրությամբ (DI) և ընտանեկան հանգամանքներով պայմանավորված վճարովի արձակուրդով (PFL): Յուրաքանչյուր անձ, ով ստանում է իր եկամտի մեծ մասը ինքնազբաղվածությունից կամ բիզնեսից, կարող է ընտրել DIEC ապահովագրությունը:

DIEC-ը պաշտպանում է Կալիֆորնիայում բիզնես վարող ընկերությունների մեծ մասը կազմող փոքր բիզնեսների սեփականատերերին, ձեռնարկատերերին, անկախ կապալառուներին կամ ինքնազբաղված մարդկանց:

Ես իրավասո՞ւ եմ DIEC-ի համար

DIEC-ին մասնակցելու համար դուք պետք է բավարարեք հետևյալ պահանջները.

- Ունենաք ձեր սեփական բիզնեսը, լինեք ինքնազբաղված, կամ աշխատեք որպես անկախ կապալառու:
- Ունենաք տարեկան \$4,600 նվազագույն շահույթ:
- Ունենաք վավեր լիցենզիա, եթե դա պահանջվում է ձեր զբաղվածությամբ:
- Դիմումը ներկայացնելու պահին ի վիճակի լինեք կատարել ձեր բոլոր պարտականությունները լրիվ դրույքով:
- Ստանաք ձեր եկամտի հիմնական մասը առևտրից, բիզնեսից կամ անկախ կապալառուի աշխատանքից:
- Ձեր բիզնեսը չի կարող սեղոնային լինել:
- Դուք պետք է մնաք ծրագրում երկու ամբողջական օրացուցային տարի, եթե չդադարեցնեք ձեր բիզնեսը կամ չտեղափոխվեք Կալիֆորնիայից:

Ավելին իմանալու համար այցելեք [Eligibility Requirements for Disability Insurance Elective Coverage](https://edd.ca.gov/Disability/Self-Employed_Eligibility.htm) (edd.ca.gov/Disability/Self-Employed_Eligibility.htm):



Օգնում ենք ձեռնարկատերերին և ինքնազբաղված մարդկանց լինել ներկա կարևոր պահերին:

Որո՞նք են իմ DIEC-ի առավելությունները:

- Պաշտպանություն եկամտի կորստից վնասվածքի, հղիության կամ հիվանդության պատճառով, անկախ նրանից՝ դա կապված է աշխատանքի հետ, թե ոչ:
- Մինչև 39 շաբաթ տևողությամբ նպաստներ ձեր հաշմանդամության համար:
- Ավտոմատ ապահովագրություն PFL-ում, որը տրամադրում է մինչև ութ շաբաթ նպաստ ընտանիքի ծանր հիվանդ անդամին խնամելու, ընտանիքում նոր երեխայի հետ մտերմանալու կամ որակավորման զինվորական իրադարձությանը մասնակցելու համար:

Վճարվելիք գումարի չափը որոշվում է Ներքին եկամուտների ծառայության (IRS) ձևաթուղթ 1040-ում ներկայացված ձեր պատասխանների հիման վրա (Հավելված SE կամ Հավելված C):

Եթե ձեր իրավասության հետ կապված հարցեր ունեք, զանգահարեք DIEC հաճախորդների սպասարկման ներկայացուցչին 1-916-654-6288 հեռախոսահամարով:

Եթե ցանկանում եք դիմումի ձևաթուղթ ստանալ, ապա կարող եք կից ձևը լրացնել և ուղարկել փոստով, ներբեռնել կամ պատվիրել այն [Forms and Publications](#) բաժնում (edd.ca.gov/forms), or call 1-916-554-7104:

Ավելին իմանալու համար՝ այցելեք [Benefits and Premium Amounts](#) (edd.ca.gov/disability/Self-Employed_Benefit_Amounts.htm):

DI-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-480-3287 հեռախոսահամարով:

PFL-ի մասին տեղեկությունների համար զանգահարեք 1-877-238-4373 հեռախոսահամարով:



Ընտանեկան հանգամանքներով պայմանավորված վճարովի արձակուրդ

Ներկա գտնվեք այն պահերին, որոնք կարևոր են:

Անգլերեն	1-877-238-4373
Իսպաներեն	1-877-379-3819
Կանտոներեն	1-866-692-5595
Վիետնամերեն	1-866-692-5596
Հայերեն	1-866-627-1567
Փենջաբերեն	1-866-627-1568
Տագալերեն	1-866-627-1569
TTY	1-800-445-1312

Դուք կարող եք նաև այցելել PFL կամ հաշմանդամության ապահովագրության գրասենյակ՝ հայցի ձևաթղթեր և տեղեկություն ստանալու կամ ներկայացուցչի հետ խոսելու համար: Գտեք ձեզ մոտ գտնվող [State Disability Insurance](https://edd.ca.gov/Disability/Contact_SDI.htm) գրասենյակը (edd.ca.gov/Disability/Contact_SDI.htm):

EDD-ն հավասար հնարավորությունների գործատու/ծրագիր է: Հաշմանդամություն ունեցող անձանց խնդրանքով տրամադրվում են օժանդակ օգնություն և ծառայություններ: Ծառայությունների, օժանդակ միջոցների և/կամ այլընտրանքային ձևաչափերի հարցումները պետք է կատարվեն զանգահարելով 1-866-490-8879 հեռախոսահամարով: TTY-ից օգտվողներ, խնդրում ենք զանգահարել կալիֆորնիայի փոխանցման ծառայություն 711 հեռախոսահամարով:

Այս բրոշյուրը միայն ընդհանուր տեղեկատվության համար է և չունի օրենքի, կանոնների և կանոնակարգերի ուժ և ազդեցություն: